

# Անկիլոզացնող սպոնդիլոարթրիտի վարման կլինիկական ուղեցույց

## Անփոփում

## Նպատակ

Ուղեցույցը հիմնված է ապացուցողական հիմք ունեցող գիտաբժշկական հետազոտությունների տվյալների և ոլորտի փորձագետների կարծիքների վրա և ուղղված է անկիլոզացնող սպոնդիլոարթրիտով (ԱՍ) պացիենտների բուժման արդյունքների բարելավմանը: Այն նպատակ է հետապնդում ձևավորվել մտածելակերպ ՀՀ տարածքում ԱՍ-ի բուժման վերաբերյալ, որն էլ իր հերթին կծառայի պացիենտների առավել արդյունավետ բուժմանը, հաշմանդամության և անաշխատունակության զգալի նվազմանը:

## Մեթոդաբանություն

Սույն Ուղեցույցը մշակվել է Ռեմատոլոգների Հայկական Ասոցիացիայի անդամների կողմից: Տեղայնացման/ադապտացիայի սկզբնաղբյուրներն են հանդիսացել հանդիսացել «Ընդդեմ Ռեմատիզմի Եվրոպական Լիգայի» (European League Against Rheumatism, EULAR) «Սպոնդիլոարթրիտների գնահատման միջազգային ասոցիացիայի» (Assessment of Spondyloarthritis International Society, ASAS) աշխատանքային խմբի կողմից 2010 թ-ին հեղինակած և 2016 թ-ին թարմացված «EULAR/ASAS-ի կողմից մշակված անկիլոզացնող սպոնդիլոարթրիտի վարման կլինիկական ուղեցույց» փաստաթուղթը: Ապացույցների մակարդակները և խորհուրդների աստիճանները գնահատելիս սկզբնաղբյուրներում հիմք է ընդունվել Օքսֆորդի ապացուցողական բժշկության կենտրոնի համակարգի մոդիֆիկացիան (Standards of Oxford Center for Evidence Based Medicine): Տեղայնացման/ադապտացիայի աշխատանքները կատարվել են ADAPTE մեթոդաբանության հիման վրա: Պատասխանատու համակարգողը և աշխատանքային խմբի անդամները հայտարարագրել են իրենց շահերի բախման վերաբերյալ տեղեկատվությունը: Ուղեցույցի բոլոր դրույթները քննարկվել և հավանության են արժանացել Ռեմատոլոգների Հայկական Ասոցիացիայի անդամների կողմից (արձանագրությունը կցվում է): Ուղեցույցը նախատեսված է ռեմատոլոգների, թերապևտների, ընտանեկան բժիշկների, ֆիզիոթերապևտների ինչպես նաև առողջապահության կազմակերպիչների համար: Փաստաթուղթը ենթակա է պարբերական թարմացումների և/կամ խմբագրման առավելագույնը 5 տարին մեկ անգամ կամ ավելի հաճախակի՝ կախված տվյալ ոլորտում նոր գիտաբորժնական տեղեկատվության ի հայտ գալուց:

## Արդյունքներ

Հիմնվելով վերոնշյալ ապացուցողական մեթոդաբանության վրա՝ ուղեցույցում լուսաբանվել են անկիլոզացնող սպոնդիլոարթրիտի սահմանումը, համաճարակաբանությունը, էթիոպաթոգենները, ախտորոշման չափանիշները, դեղորայքային և ոչ դեղորայքային բուժման արդյունավետությունը և ելքերի հիմնահարցերը: Ընդհանուր առմամբ ձևակերպվել է 4 հիմնարար սկզբունքներ և 11 խորհուրդներ:

## **Հետևություններ**

Ուղեցույց կարող է կիրառվել բոլոր այն պացիենտների համար, որոնք համապատասխանում են ԱՍ-ի Նյու Յորքյան մոդիֆիկացված չափանիշներին՝ անկախ արտահոդային արտահայտություններից: Հաշվի են առնվել ԱՍ-ի բոլոր դեղորայքային և ոչ դեղորայքին միջամտությունները բոլոր տարիքի պացիենտների համար՝ այդ թվում նաև երեխաների:

## **Բանալի բառեր**

**անկիլոզացնող սպոնդիլոարթրիտ, Ընդդեմ Ռևմատիզմի Եվրոպական Լիգայի ուղեցույցեր**, Assessment of Spondyloarthritis International Society, ASAS, European League Against Rheumatism, EULAR, BASDAI, ASDAS, DMARDs,

## **Աշխատանքային խմբի անդամներ**

Հարոյան Ա.Ա. բ.գ.թ. ՀՀ ԱՆ գլխավոր ունևատուլոգ, «Էրեբունի» բժշկական կենտրոնի ունևատուլոգիական բաժանմունքի վարիչ, Ռևմատուլոգների Հայկական Ասոցիացիայի նախագահ

Մկրտչյան Ն.Ռ. բ.գ.թ., Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի թերապևտիկ նեղ մասնագիտությունների ամբիոնի դոցենտ

Մանուկյան Ս.Գ. բ.գ.թ., Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի N 1 կլինիկական հիվանդանոցի թերապիայի կլինիկայի բժիշկ-ունևատուլոգ

Գինոյան Բ.Վ. բ.գ.թ., Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի N 1 կլինիկական հիվանդանոցի թերապիայի կլինիկայի բժիշկ-ունևատուլոգ

Վարդանյան Վ.Ս. բ.գ.թ., Երևանի "Մուրացան" համալսարանական հիվանդանոցի թերապիայի կլինիկայի բժիշկ-ունևատուլոգ

Մուկույան Վ.Ն. «Էրեբունի» բժշկական կենտրոնի ունևատուլոգիական բաժանմունքի բժիշկ-ունևատուլոգ

## **Շահերի բախման հայտարարագիր և ֆինանսավորման աղբյուրներ**

Աշխատանքային խմբի անդամները չեն հայտարարագրել, շահերի որևէ բախում: Սույն փաստաթղթի մշակման աշխատանքները ֆինանսավորվել են ՀՀ ԱՆ կողմից: Ֆինանսավորող կառույցը չի ունեցել և ոչ մի ազդեցություն սույն ուղեցույցի մշակման որևէ փուլի վրա:

## **Շնորհակալական խոսք**

Պատասխանատու համակարգողը իր երախտագիտությունն է հայտնում աշխատանքային խմբի բոլոր անդամների, ինչպես նաև, սույն ուղեցույցի մշակման աշխատանքներին իրենց աջակցությունը, խորհրդատվությունը և մասնագիտական գիտելիքները տրամադրած գործընկերներին, հատկապես՝ ՀՀ ԿԳՆ Երևանի պետական համալսարանի Ֆարմացիայի ինստիտուտի կենսաբժշկության ամբիոնի վարիչ, ՀՀ ԱՆ Առողջապահության ազգային ինստիտուտի «Ապացուցողական բժշկություն» դասընթացի ղեկավար, ՀՀ ԱՆ Հանրապետական գիտաբժշկական գրադարանի «Բժշկական սեղմագրերի հայկական հանդես»-ի գլխավոր խմբագիր, «Ապացուցողական բժշկության մասնագետների հայկական ասոցիացիա»-ի նախագահ՝ Բ.Գ.Դ., պրոֆեսոր Ռուբեն Հովհաննեսյանին և Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի շարունակական բժշկական կրթության ֆակուլտետի անեսթեզիոլոգիայի և ինտենսիվ թերապիայի ամբիոնի դոցենտ, «Էրեբունի» բժշկական կենտրոնի վերակենդանացման բաժանմունքի գիտական ղեկավար Բ.Գ.Թ., Հարություն Մանգոյանին:

***Ուղեցույցը չի կարող փոխարինել բժշկի որոշումները ընդունելու հմտություններին և չի ենթադրում նրանց անվերապահորեն և ավտոմատիզացված կիրառումը անխտիր բոլոր պացիենտների մոտ: Խորհուրդների մեծամասնությունը կիրառելի է ինչպես ռևմատոլոգիական և թերապևտիկ սրացիոնարում հոսպիտալացված պացիենտների այնպես էլ ամբուլատոր կարգով բուժում սրացողների և դիսպանսեր հսկողության րակ գտնվող պացիենտների համար:***

## **Բովանդակություն**

Նախաբան

Տեղեկատվության որոնման և գնահատման մեթոդաբանություն

Համաճարակաբանություն

Ախտորոշման չափանիշներ

Հիմնարար սզկբունքներ

Խորհուրդներ

Ներդրման հնարավորություններ և աուդիտի ցուցանիշներ

Գրականության ցանկ

Հավելված 1. Օքսֆորդի ապացուցողական բժշկության կենտրոնի ապացույցների գնահատման համալիր

## **Հապավումներ**

ԱՄ՝ ապացույցների մակարդակ

ԱՍ՝ անկիլոզացնող սպոնդիլոարթրիտ

ՍԱ՝ սպոնդիլոարթրիտ

ԳԿՍ՝ գլյուկոկորտիկոստերոիդներ

ՀՍ՝ հիմնարար սզկբունքներ

ՀՄ՝ համաձայնության մակարդակ

ՀՇ՝ համակարգչային շերտագրում

ՈԻՆԳ՝ ուռուցքի նեկրոզի գործոն

ԷՆԱ՝ էրիթրոցիտների նստեցման արագություն

ՄՌՏ՝ Մագնիսառեզոնանսային տոմոգրաֆիա

ԽԱ՝ խորհուրդի աստիճան

ՉՍՀ՝ զստոսկրասրբոսկրային հողավորում

ASAS՝ Սպոնդիլոարթրիտների գնահատման միջազգային ասոցիացիայի

EULAR՝ Ընդդեմ ռևմատիզմի եվրոպական լիգա

ICAM-1՝ միջբջջային ադհեզիայի մոլեկուլ 1

MMP-3՝ մատրիքսային մետալոպրոտեինազա 3

HLA B27՝ Մարդու լեյկոցիտար անտիգեն B 27

ՈՍՀԴ՝ ոչ ստերոիդային հակաբորբոքիչ դեղամիջոցներ

ՀՄՀՆԴ՝ Հիվանդություն մոդիֆիկացնող հակառևմատիկ դեղորայք

COX-2՝ ցիկլոօքսիգենազա 2

CRP – C ռեակտիվ սպիտակուց

TNFi (tumor necrosis factor inhibitor)՝ ուռուզքի մեռուկացման գործոնի պաշարիչ

IL-17i – ինտերլեյկին 17-ի պաշարիչ

ASDAS – Անկիլոզացնող սպոնդիլոարթրիտի հիվանդության ակտիվության սանդղակ

BASDAI - Անկիլոզացնող սպոնդիլոարթրիտի հիվանդության ակտիվության ինդեքս

## **Նախաբան**

Անկիլոզացնող սպոնդիլոարթրիտը (ԱՍ) անհայտ ծագման խրոնիկական բորբոքային հիվանդություն է, որն առավելապես բնութագրվում է ողնաշարի, զստոսկրա-սրբոսկրային հողավորումների (ՉՍՀ), որոշ դեպքերում պերիֆերիկ հողերի, էնթեզիսների և առավել հազվադեպ աչքերի, սրտի, աորտային և ներքին օրգանների ախտահարմամբ [1]: Խրոնիկ և հաճախ բորբոքային բնույթի ցավը ԱՍ-ի առաջատար գանգատն է, որն ուղեկցվում է արտահայտված կարկանդակային և ֆիզիկական ակտիվության ֆոնին՝ բարելավմամբ: ԱՍ-ին նաև բնորոշ են մի շարք արտահոդային դրսևորումներ՝ ուլեիտ, պսորիազ և աղիների բորբոքային հիվանդություն [2]: Հիվանդության ծագումնաբանությունը անհայտ է, սակայն

տարբեր ժամանակներում ի հայտ են եկել տարբեր հիպոթեզներ՝ կապված ինֆեկցիոն և գենետիկական գործոնների հետ: Բորբոքային գործընթացում մեծ դեր են խաղում ՌԻՆԳ, ինտերլեյկին-1 և ինտերլեյկին 6-ը, միջբջջային ադիեզիայի մոլեկուլ 1-ը (ICAM 1), մետալոպրոտեինազա 3-ը (MMP - 3), այլ ցիտոկիններ և բորբոքային մեդիատորներ: Անվիճելի է նաև HLA B27 անտիգենի դերը հիվանդության ախտաձագման գործընթացում: Տեղի ունեցող փոփոխություններն ի վերջո հանգեցնում են ողնաշարի ջլակապանային համակարգի բորբոքային փոփոխությունների, էնդոխոնդրիալ օստիֆիկացիայի, ողերի և միջողային սկավառակների սահմանների վերացման, սինդեզմոֆիտների ձևավորման, ողնաշարի շարժունակության անկման, ի վերջո ողնաշարի այսպես կոչված "բամբուկի փայտի" ձևավորմանը:

Եթե անցյալում զստոսկրա սրբոսկրային հողի (ՋՍՀ) ռենտգենաբանական, իսկ քիչ անց, մագնիսառեզոնանսային տոմոգրաֆիկ (ՄՌՏ) հետազոտությունները համարվում էին ախտորոշման ոսկե ստանդարտ, ապա ներկայումս հարմարվում է, որ այս գործիքային քննությունները խաղում են օժանդակ դեր և ախտորոշումը հիմնվում է կլինիկական պատկերի վրա՝ նույնիսկ ճառագայթաբանական փոփոխությունների բացակայության դեպքում [1,3,4]: Հարկավոր է նշել որ մինչ այժմ քննարկվում է արդյոք ճառագայթաբանական փոփոխություններով ԱՍ և վերջիններիս բացակայությամբ ուղեկցվող սակայն կլինիկորեն հաստատված ԱՍ համարվում են երկու տարբեր հիվանդություններ թե մեկ հիվանդության տարբեր փուլեր: Ամեն դեպքում ապացուցված է, որ ճառագայթաբանական փոփոխություններով ԱՍ-ով ոչ բոլոր պացիենտների շրջանում են զարգանում սինդեզմոֆիտներ և ԱՍ-ի կլինիկական պատկերով ոչ բոլոր պացիենտների շրջանում է, որ զարգանում են հիվանդության ճառագայթաբանական նշաններ [5-11]: Իրականում ճառագայթաբանորեն ախտորոշված սակրոիլեիտի հիման վրա ԱՍ-ի բաժանումը կրում է արհեստական բնույթ և որևէ կերպ չի անդրադառնում հիվանդության ելքերի վրա: Այս դրույթի մեկ այլ ապացույցը կարելի է գտնել հիվանդության բուժման հարմար կիրառվող նոր սերնդի դեղորայքի նշանակման քաղաքականության փոփոխման մեջ: Այսպես, ուռուցքի մեռուկացման գործոնի ինհիբիտորները (TNFi) վաղուց հաստատված եր ճագառայթաբանորեն ախտորոշված սակրոիլեիտով ԱՍ-ով պացիենտների բուժման շրջանում: Իսկ ներկայումս Եվրոպական դեղորայքային գործակալությունը (European Medicines Agency) առաջարկում է դիտարկել ԱՍ իբրև մեկ

հիվանդություն և կիրառել դեղորայքը անկախ ճառագայթաբանական հետազոտությունների արդյունքների վերլուծության [12-18]:

2003 թ լույս տեսան և 2006, 2010թթ թարմացվեցին Սպոնդիլոարթրիտների գնահատման միջազգային ասոցիացիայի (ASAS) առաջին ուղեցույցերը, որտեղ ընդգրկված էր TNFi իբրև միակ հաստատված «հիվանդությունը մոդիֆիկացնող հակառևմատիկ դեղորայք» (ՀՄՀՌԴ) [19-21]: Հաջորդիվ Ընդդեմ ռևմատիզմի Եվրոպական ասոցիացիայի (EULAR) հետ համատեղ մշակված ASAS-ի ուղեցույցերում արդեն ներառվեցին այլ խմբերի ՀՄՀՌԴ-րը և ավելի հստակ ձևակերպվեցին դեղորայքի նշանակման ցուցումները [24-28]:

### **Տեղեկատվության որոնման և գնահատման մեթոդաբանություն**

Սույն Ուղեցույցը մշակվել է Ռևմատոլոգների Հայկական Ասոցիացիայի անդամների կողմից: Գրականական աղբյուրները ընտրվել են բանալի բառերի օգնությամբ իրականացված համակարգային որոնման հիման վրա: Որոնման ժամանակահատվածը եղել է՝ 2007-2016թթ.: Փաստաթղթերի նկատմամբ կիրառվել են հետևյալ տեսակավորման ցուցանիշները՝ ուղեցույցերի ապացուցողական բնույթ (համակարգված ամփոփ տեսություն և ցանկացած խոհուրդի վերաբերյալ հստակ հղումների առկայություն), ազգային կամ համաշխարհային ամփոփումների կարգավիճակ, անգլերեն լեզու: Տեղայնացման/ադապտացիայի սկզբնաղբյուրներն են հանդիսացել հանդիսացել «Ընդդեմ Ռևմատիզմի Եվրոպական Լիգայի» (European League Against Rheumatism, EULAR) «Սպոնդիլոարթրիտների գնահատման միջազգային ասոցիացիայի» (Assessment of Spondyloarthritis International Society, ASAS) աշխատանքային խմբի կողմից 2010 թ-ին հեղինակված և 2016 թ-ին թարմացված «EULAR/ASAS-ի կողմից մշակված անկիլոզացնող սպոնդիլոարթրիտի վարման կլինիկական ուղեցույց» փաստաթուղթը: Ապացույցների մակարդակները (ԱՄ) և խորհուրդների աստիճանները (ԻՄԱ) գնահատելիս սկզբնաղբյուրներում հիմք է ընդունվել Օքսֆորդի ապացուցողական բժշկության կենտրոնի համակարգի մոդիֆիկացիան (Standards of Oxford Center for Evidence Based Medicine): Կիրառված գնահատման համալիրի վերաբերյալ մանրամասները տես՝ Հավելված 1-ում: Բացի խորհուրդներից ձևակերպվել են այսպես կոչված «հիմնարար սկզբունքները» (overarching principles): Վերջիններս գործողության ստանդարտներ են, որոնք վայելում են

համատարած համաձայնություն և նրանց արդյունավետությունը հիմնված է տարիների փորձի վրա: Ուստի այս հիմնարար սկզբունքների (ՀՍ) նկատմամբ չի կիրառվել ապացույցների դասակարգման որևէ համալիր: Ձևակերպված գերակայող սկզբունքները և խորհուղները ներկայացվել, քննարկվել և ամփոփվել են փորձագետների կողմից համակարծրության գալու նպատակով: Քվեարկության գործընթացի միջոցով սահմանվել են համաձայնության մակարդակները (ՀՄ): Տեղայնացման/ադապտացիայի աշխատանքները կատարվել են ADAPTE մեթոդաբանության հիման վրա: Պատասխանատու համակարգողը և աշխատանքային խմբի անդամները հայտարարագրել են իրենց շահերի բախման վերաբերյալ տեղեկատվությունը: Ուղեցույցի բոլոր դրույթները քննարկվել և հավանության են արժանացել Ռևմատոլոգների Հայկական Ասոցիացիայի անդամների կողմից (արձանագրությունը կցվում է): Ուղեցույցը նախատեսված է ռևմատոլոգների, թերապևտների, ընտանեկան բժշկների, ֆիզիոթերապևտների ինչպես նաև առողջապահության կազմակերպիչների համար: Փաստաթուղթը ենթակա է պարբերական թարմացումների և/կամ խմբագրման առավելագույնը 5 տարին մեկ անգամ կամ ավելի հաճախակի՝ կախված տվյալ ոլորտում նոր գիտագործնական տեղեկատվության ի հայտ գալուց:

### **Համաճարակաբանություն**

Հիվանդությունը Եվրոպայում և Հյուսիսային Ամերիկայում ախտարում է մեծահասակ բնակչության մոտ 0.1 - 1.4 % [3, 4]: Նախորդ տարիներին ընդունված էր համարել, որ տղամարդկանց և կանանց ախտահարման հարաբերությունը հավասար է 9:1-ի սակայն վերջին տարիների կատարված համաճարակաբանական հետազոտություններ այլ բան են վկայում, ըստ որի տղամարդկանց և կանանց ախտահարման հարաբերությունը հավասար է 3:1-ի [5-7]: ՀՀ տարածքում հիվանդության տարածվածությունը կազմում է 155 դեպք 100.000 բնակչության [8]:

### **Ախտորոշման չափանիշներ**

**Անկիլոզացնող սպոնդիլոարթրիտի ախտորոշման մոդիֆիկացված չափանիշներ**



**Ա. Կլինիկական չափանիշներ**

- Գոտկատեղի ցավ և կարկամվածություն ավելի քան 3 ամիս, որը բարելավվում է շարժումներից, վարժություններից և չի թուլանում հանգստի ժամանակ
- Ողնաշարի գոտկային հատվածի շարժունակության սահմանափակում և ֆրոնտալ և սագիտալ հարթություններում
- Կրծքավանդակի էքսկուրսիայի սահմանափակում՝ համեմատ տարիքի և սեռի

**Բ. Ռադիոլոգիական չափանիշներ**

- Երկկողմանի սակրոլիեիտ  $\geq 2$  աստիճանի
- Միակողմանի սակրոլիեիտ 3 – 4 աստիճան

***Ախտորոշման համար անհրաժեշտ է առնվազն մեկ ռադիոլոգիական և մեկ կլինիկական չափանիշի առկայություն***

**Հիմնարար սկզբունքներ**

EULAR-ի 2010 և 2016 թվականների ուղեցույցերը մեկնարկում են մշակված հիմնարար սկզբունքների (ՀՍ) ձևակերպումներով: Վերջիններս իրենցից ներկայացնում են գործունեության ստանդարտներ հիմնված համատարած համաձայնության և երակարտև տարիների գործնական փորձի վրա: ՀՍ-րի նկատմամբ չի կիրառվում ապացույցների դասակարգման սկզբունքը, ուստի տվյալ հարցի շուրջ նրանք ավելի շուտ արտահայտում են գործնական բժշկությունը քան գիտական ապացույցների կարգավիճակը: Յուրաքանչյուր ՀՍ վերջում ներկայացվում է վերջինիս վերաբերյալ փորձագետների համաձայնության աստիժանը (ՀԱ):

**ՀՍ 1.**

**ԱՍ պոստենցիալ ծանր հիվանդություն է բազմազան արտահայտություններով, որը սովորաբար պահանջում է ունենալուց կողմից համակարգվող բազմամասնագիտական համալիր վարում : ՀԱ (0-10) 9.9 (0.31) 100% ≥ 8**

Սա շատ կարևոր ՀՍ է քանզի սևեռում է վարող մասնագետների ուշադրությունը այն փաստի վրա, որ հիվանդության ոսկրամկանային արտահայտումները կարող են զգալի ազդեցություն ունենան պացիենտի կայնքի որակի վրա և ԱՍ-ի ժամանակ պացիենտների ավելի քան 40% ունենում է առնվազն մեկ արտահոդային արտահայտում [2, 43]: Այս արտահոդային արտահայտումներից որոշները պահանջում են այլ մասնագետների շտապ խորհրդատվություն ինչը ձևավորում է ԱՍ-ի վարման բազմամասնագիտական բնույթը:

**ՀՍ 2.**

**ԱՍ-ով պացիենտների բուժման առաջնային նպատակը առավելագույնին հասցնել և հնարավորինս երկար պահպանել առողջության հետ կապված կյանքի որակը՝ վերահսկելով հիվանդության ախտանիշները և բորբոքումը, կանխարգելելով հիվանդության կառուցվածքային փոփոխությունների առաջընթացը, պահպանելով/վերականգնելով ֆունկցիաները և մասնակցությունը հասարակական կյանքին: ՀԱ (0-10) 9.8 (0.47) 100% ≥8**

Բազմաթիվ հետազոտություններ ապացուցել են, որ ԱՍ-ով պացիենտների անվազած կյանքի որակը ի համեմատ առողջ բնակչությանը [44, 45]: Պացիենտների խնդիրները կաելի է ամփոփել համաձայն Հաշմանդամության, առողջության և կենսական ակտիվության միջազգային դասակարգման (International Classification of Functioning, Disability and Health, ICF) կամ ASAS-ի Առողջության սանդաղկի, որը նույնպես հիմնված է ICF-ի վրա [46-48]: Ելնելով ԱՍ-ի բնույթից բորբոքման ընկ-որմտ խաղում է որոշիչ դեր գանգատների նվազեցման, ֆունկցիոնալ ակտիվության պահպանման և կյանքի որակի բարելավման հարցերում: Կլինիկական տվյալները ենթադրում են ուղիղ կապ հիվանդության ակտիվության և սինդեմոֆիտների առաջացման ինչպես նաև ֆունկցիոնալ ակտիվության միջև [49-51]: Ավելին, հիվանդության ոչ ակտիվ փուլում պացիենտները ունեն ավելի լավ առողջության հետ կապված կյանքի որակ [52]:

**ՀՍ 3.**

**ԱՍ-ով պացիենտների օպտիմալ բուժումը պահանջում է դեղորայքային և ոչ դեղորայքային բուժման համադրություն: ՀԱ (0-10) 9.8 (0.45) 100% ≥ 8**

Ի տարբերություն այլ համկարգային ռևմատոլոգիական հիվանդությունների (ռևմատոիդ արթրիտի) ԱՍ-ի դեպքում ոչ դեղորայքային բուժումները ունեն ահարբերական ավելի մեծ նշանակություն: Այս դրույթը արտացոլվել է նաև սույն ուղեցույցի աշխատանքային խմբի կողմից ձևակերպված համապատասխան խորհուրդի միջոցով:

**ՀԱ 4.**

**Վարումը պետք է թիրախավորի լավագույն բուժման (best care) ապահովելուն և հիմնված լինի պացիենտի և ռևմատոլոգի համատեղ որոշման վրա և պետք է ապահովի օպտիմալ ելք պացիենտի համար: ՀԱ (0-10) 9.5 (0.91) 100% ≥ 8**

Լավագույն բուժում կոնցեպցիան սկզբունքային է և սետորոն կապկապցված է ՀԱ 2-ի «հնարավորինս պահպանել առողջության հետ կապված կյանքի որակը» դրույթի հետ: Սակայն ՀԱ 4-ում այն մատնանաշում է լավագույն հնարավոր բուժում տվյալ անհատի համար և պահպանում է իր գերակայությունը նույնիսկ բուժման ծախսերի վերլուծման պարագայում: Համատեղ որոշումներ ընդունելը ենթադրում է պացիենտի բավարար իրազեկում հիվանդության բնույթի, բնական ընթացքի, բուժման տարբերակների հավանական ռիսկերի և օգուտների վերաբերյալ:

**ՀԱ 5.**

**ԱՍ ուղեկցվում է զգալի ծախսերով անհատի և հասարակության համար: ՀԱ (0-10) 9.3 (1.17) 97% ≥ 8**

Սա նոր հիմնարար սզկբունք է, որն վերցված է EULAR-ի ռևմատոիդ արթրիտի կլինիկական ուղեցույցից [22, 23]: Այն սևեռում է ուշադրությունը ինչպես հիվանդության այնպես էլ նար բուժման հետ կապված բարձր ծախսերին: Խոսքը գնում է պացիենտի ուղղակի ֆինանսական ծախսերի և առողջապահական համակարգի համար հիվանդության բեռի մասին: Հասարակության համար ծախսերը գնահատելիս հարակվոր է համալիր կերպով վերլուծել բուժման ծախսերը և աշխատանքային արդյունավետության կուրստի հետրանքով առաջացող անուղղակի ֆինանսական վնասները: Այ երկու տեսակի ծախսերը հրակավեր է ընդգրկել թանկարժեք բուժման տարբերակների ծախս/արդյունավետություն

վերլուծության շրջանակներում [53]: Բուժման տարբեր մոտեցումների ընտրության հարցում տնտեսական գործոնը կարող է լինել որոշիչ միայն երբ պացիենտի բուժման ակնկալվող արդյունքները հավասարաժեշտ են: Այլ պարագայաներում հարկավոր է ղեկավարվել չորրորդ ՀՍ-ի «լավագույն բուժում» սկզբունքով: Միևնույն ժամանակ, աշխատանքային խումբը գիտակցում է, որ հարկավոր է հաշվի առնել տեղային առանձնահատկությունները և տնտեսական պայմանները:

## **Խորհուրդներ**

Ընդհանուր առմամբ ձևակերպվել է 13 խորհուրդ, որոնցից երկուսը (#3 և #11) ամբողջովին նոր են համեմատած EULAR-ի 2010 թվականի ուղեցույցի: Միևնույն ժամանակ հին ուղեցույցի մեկ խորհուրդ (#4) հեռացվել է քանզի այն բավարար ներկայացված է ՀՍ-ով և այլ խորհուրդներով: Ի տարբերություն 2010 թ ուղեցույցի խորհուրդների, որոնք կրում էին հաճախ դեկլարատիվ բնույթ և հիեցնում էին հայտարարագրեր, 2016 թվականի խորհուրդները ավելի հստակ են ձևակերպված և կրում են գործնական բնույթ: Ավելին, բոլոր խորհուրդներին շնորհվել են համապատասխան ապացուցողականության մակարդակները և խորհուրդների աստիճանները:

### ***Խորհուրդ #1***

***ԱՍ-ով պացիենտների բուժումը պետք է անհատականացվի հիմնվելով հիվանդության փուլի և ախտանշանների (աքսիալ, ծայրամասային, արտահոդային), պացիենտի բնութագրերի և հոգեբանասոցիալական գործոնների վրա: 5D***

Գրեթե բոլոր ԱՍ-ով պացիենտները ունեն նմանատիպ կլինիկական արտահայտումներ և հիվանդության ընթացք ինչը ենթադրում է կարծրատիպային կամ ընդհանրացված մոտեցումների կիրառման հնարավորություն: Սակայն անհատական դեպքերում կախված կլինիկական նշանների ժամանակային ի հայտ գալուց, համադրությունից և

ուժգնությունից, պացիենտի սոմատիկ և հոգեբանական վիճակից վարումը պետք է կրի խստ անհատականացված բնույթ: Այս խորհուրդը մատնանշում է չափազանց ընդհանրացված մոտեցումների հավանական վտանգները:

## ***Խորհուրդ # 2***

***ԱՍ-ով պացիենտի հիվանդության մոնիթորինգը պետք է ներառի՝ պացիենտի կողմից ներկայացվող արդյունքները, կլինիկական ցուցանիշները, լաբորատոր և գործիքային քննությունների տվյալները: Բոլոր այս տեղեկատվությունը պետք է հավաքագրվի համապատասխան գործիքներով իսկ մոնիթորինգի հաճախականությունը պետք է պայմանավորվի կլինիկական նշաններով, վիճակի ծանրությունով և բուժման արդյունավետությամբ: 5D***

Ելնելով ԱՍ-ի կլինիկական դրսևորումների բազմազանությունից այս ախտաբանության մոնիթորինգը պետք է ընդգրկի քննությունների լայն տեսականի: Օգտակար և արդյունավետ գործիք է համարվում ASAS-ի մոնիթորինգի փաթեթը [54]: Այն ներառում է ցավի և հիվանդության ակտիվության հարցաշարերը (BASDAI), ֆիզիկական կարգավիճակի գործակիցը (Bath AS Functional Index), այտուցված հոդերի քանակը, ողնաշարի շարժունակությունը և անհրաժեշտության դեպքում արտահոդային նձանների գնահատումը [54]: ASDAS-ը՝ դա հիվանդության ծանրության գնահատման հարաբերական նոր համալիր է, որը միավրում է պացիենտի կողմից հաղորդվող տվյալները C- ռեակտիվ սպիտակուցի (կամ էրիթրոցիտների նստեցման արագության) արժեքները մեկ սանդղակի շրջանակներում [55]: Ապացուցված է ASDAS-ի արդյունքների և սինդեսմոֆիտների առաջացման միջև գոյություն ունեցող ուղղակի կապը, մինչդեռ BASDAI-ի դեպքում նույնիսկ համակցելով C-ռեակտիվ սպիտակուցի մակարդակների հետ այն շատ ավելի թույլ է արտահայտված [49]:

Հիվանդության վաղ փուլերում կարող է օգտագործվել ՉՍՀ մագնիսառեզոնանսային տոմոգրաֆիան (ՄՌՏ): Հետագա փուլերում ավելի ինֆոմատիվ է դառնում ողնաշարի ՄՌՏ [28, 56]: Սակայն հիվանդության կլինիկական ակտիվության ցուցանիշների և ՄՌՏ տվյալների միջև կոռելյացիան խիստ չափավոր է [57-60]: Ներկայումս ՄՌՏ դերը ԱՍ-ի

մոնիթորինգի հարցում շարունակում է մնալ վերջնականորեն չհաստատված: Բացի նրանից, որ պարզ չէ արդյոք հարկավոր է բուժել ՄՌՏ-ով հայտնաբերված բորբոքային փոփոխությունները կլինիկորեն ոչ ակտիվ պացիենտների խմբերում, հետազոտության արժեքը սահմանափակում է նրա կիրառելիությունը իբրև մոնիթորինգի գործիք: Հետևաբար ՄՌՏ ներկայումս խորհուրդ է տրվում օգտագործել իբրև օժանդակ գործոն առկա բորբոքային փոփոխությունների աստիճանի գնահատման և բուժման մեկնարկի և շարունակության որոշումների քննարկման ժամանակ:

ԶԱՀ-ն ռենտգեն հետազոտությունները չունեն տեղ հիվանդության մոնիթորինգի մեջ, սակայն նրանք կարող են օգտակար լինել երբ հարկավոր է գնահատել արդյոք պացիենտը համապատասխանում է կենսաբանական ՀՄՀՌԴ-ի մեկնարկի ցուցանիշներին: Միևնույն ժամանակ ողնաշարի ռենտգենը կարող է տրամադրել օգտակար տեղեկատվություն սինդեսմոֆիտների առկայության, տվյալ պացիենտի բուժման արդյունքների [49, 51]: Հաշվի առնելով ռենտեգնաբանական դանդաղ դինամիկան խորհուրդ է տրվում կատարել այն առավելագույնը 2 տարին մեկ անգամ:

### ***խորհուրդ #3***

#### ***Բուժումը պետք է հետապնդի կանխավ որոշված թիրախները: 5D***

ԱՍ-ի վարման պատմության մեջ առաջին անգամ ստացվեց ապացուցել, որ հիվանդության ակտիվությունը իբրև բուժման թիրախ ընտրելու արդյունավետությունը [49, 51]: Նմանատիպ թիրախները պետք է լինեն ռևմատոլոգի և պացիենտի միասնական որոշման արդյունք և հաշվի առնեն բոլոր կարևոր հանգամանքները: Բուժումը մեկնարկելուց հետո հարկավոր է շարունակական վերահսկել, որպեսզի համոզվել թիրախային նպատակների հասնելը: Սկզբունքորեն ոչ ակտիվ հիվանդությունը՝ դա իդեալական թիրախ է, սակայն կախված հիվանդության փուլից և նախկինում ստացված բուժումներից շատ հնարավոր է, որ նմանատիպ թիրախին հասնելու ճանապարհը հղի լինի բարձր դիսկերոլ և բարդություններով: Ուստի աշխատանքային խումբը որոշեց խորհուրդ տալ ունենալ բուժման թիրախ, սակայն զերց մնաց որևէ յուրահատուկ թիրախ մատնանշելուց:

**խորհուրդ #4**

**ԱՍ-ով պացիենտներին հարկավոր է համակարգված կրթել\* խրախուսելով շարունակական կատարել ֆիզիկական վարժանքներ\* և հրաժարվել ծխելուց՝ հարկավոր է քննարկել նաև ֆիզիկական թերապիան՝: \*2B 15D 1a A**

Պացիենտների կրթումը հանդիսանում է բուժման կարևորագույն ասպեկտ և համարվում է բավականին արդյունավետ միջոց: [61-63] Հայտնի է նաև, որ աքսիալ սպոնդիլառթրոսիտի ժամանակ տնային վարժությունները արդյունավետ են, այդ իսկ պատճառով վերջիններս խորհուրդ են տրվում հիվանդներին: [64] Ապացուցված է, որ ֆիզիոթերապիան առավել արդյունավետ է քան տնային վարժությունները, սակայն հաշվի առնելով, որ այն առավել ծախսատար է և ոչ միշտ հասանելի ֆիզիոթերապիան կարող է կիրառվել որոշակի հիվանդների դեպքում: [64] Չնայած, որ առկա է համակարծրություն ծխելուց հրաժարվելու օգտակար ներգործության հարցում հարկ է նշել, որ դեռևս չկան հավաստի տվյալներ ըստ որոնց ծխել դադարեցնելն ունի ստատիստիկորեն հավաստի օգտակար ազդեցություն աքսիալ ԱՍ-ի վրա:

**խորհուրդ #5**

**Այն պացիենտներն ովքեր փառապում են ցավից և առավոտյան կարկամվածությունից որպես առաջին գծի դեղորայք պետք է կիրառեն ՈՍՀԴ առավելագույն դեղաչափով՝ հաշվի առնելով ռիսկերը և օգտակարությունը: Նրանք, ովքեր լավ պատրաստանում են ՈՍՀԴ-ին, դրանց շարունակական կիրառումը նախընտրելի է սիմպտոմատիկ կիրառումից: 1a A**

ՈՍՀԴ պետք է նշանակվի երբ պացիենտն ունի ախտանիշներ: Բուժումը պետք է խորհուրդ տրվի առավելագույն տանելի դեղաչափերով՝ մշտապես կշռադատելով օգուտները և պոտենցիալ կողմնակի ազդեցությունները: Չնայած նրան, որ մշտապես գոյություն ունեն բանավեճեր ՈՍՀԴ երկարատև կիրառելու մասին՝ մանավանդ երիտասարդ պացիենտների մոտ, կան երկու հետազոտություններ ըստ որոնք ՈՍՀԴ չկիրառումը հանգեցնում է բարձր մահացության [69, 70]:

Հետազոտությունները փաստում են, որ բարձր CRP ունեցող հիվանդների մոտ ՈՍՀԴ շարունակական կիրառումը նվազեցնում է ողնաշարի կառուցվածքային վնասի

պրոգրեսիան ի համեմատ ՈՍՀԴ-ի սիմպտոմատիկ կիրառմանը [71, 72]: Նույնանման արդյունքներ են արձանագրվել նաև մեկ այլ հետազոտության ժամանակ, երբ համեմատվել են բարձր դեղաչափով ՈՍՀԴ ստացողների և միջին-ցածր դեղաչափով բուժում ստացողների արդյունքները, որտեղ առաջին խմբում ընդգրկվածների մոտ գրանցվել են առավել լավ արդյունքներ [73]: Համարժեք ապացույցների բացակայության պարագայում, ի վերջո խորհուրդ է տրվում շարունակական կիրառել ՈՍՀԴ սիմպտոմների առկայության պարագայում քան ողնաշարի կառուցվածքային վնասի պրոգրեսիայի հնարավոր դանդաղեցման համար: Եթե ախտանիշները ռեցիդիվում են դեղորայքի դադարեցումից կամ դեղաչափի նվազեցումից հետո ապա այն անհրաժեշտ է կիրառել շարունակական ձևով: Իսկ թե շարունակական ՈՍՀԴ-ի կիրառումն անհրաժեշտ է ռիսկի գործոնների (սինդեզմոֆիտների առկայություն, բարձր CRP, երկարատև հիվանդություն, ողնաշարի բորբոքային ախտահարումներ ՄՌՏ-ում) առկայության դեպքում սինդեզմոֆիտների պրոգրեսիան կանխելու համար մնում է հետագա հետազոտությունների խնդրո առարկա [49 51 65 72 73 75-78]:

#### **Խորհուրդ #6**

**Անալգետիկներ, ինչպիսիք են պարացետամոլը կամ օպիոիդային դեղորայքը կարող են դիտարկվել մնացորդային ցավի համար, երբ նախօրոք նշանակված բուժումը ձախողվել է, հակացուցված է և/կամ վատ փանելի է: 5 D**

Այս խորհուրդն ունի թույլ ապացուցողականություն, քանի որ բացակայում են ապացույցներն առ այն որ անալգետիկներն արդյունավետ են արքիալ ՍԱ ժամանակ: Այնուամենայնիվ բանականությունը թելադրում է, որ նրանք կարող են մեղմել ցավը միայն այն դեպքում երբ ձախողվել է ցուցված բուժումը՝ այդ թվում նաև կենսաբանական ՀՄՀՌԴ-ը:

#### **Խորհուրդ #7**

**Գլյուկոկորտիկոստերոիդների (ԳԿՍ)՝ դեպի բորբոքման կետն ուղղորված փեղային ներարկումները\* կարող են դիտարկվեն: Աքսիալ ձևով փառապող հիվանդները չպետք է երկարատև ստանան ԳԿՍ: 2 B\* 5 D†**



Աշխատանքային խումբն այն կարծիքին է, որ ԳԿՍ տեղային ներարկումները կարող են տարբերակ հանդիսանալ արթրիտի կամ էնթեզիտի բուժման համար՝ չնայած ուղղակի ապացույցների բացակայությանը: Ինչ վերաբերվում է ԳԿՍ համակարգային օգտագործմանն ապա նոր տվյալները վկայում են, որ կարճաժամկետ մեծ դեղաչափերով ԳԿՍ-ի համակարգային կիրառումը (50մգ/օր) աքսիալ ՍԱ-ի սիմպտոմների վրա կարող է ունենալ չափավոր արդյունավետություն [79]: Այնուամենայնիվ աշխատանքային խումբն այն կարծիքին է, որ աքսիալ ՍԱ-ով հիվանդները չպետք է բուժվեն ԳԿՍ համակարգային երկարաժամկետ կիրառմամբ՝ անկախ դեղաչափից:

### **Խորհուրդ #8**

***Միայն աքսիալ ՍԱ ունեցող հիվանդները նորմալում չպետք է ստանան ավանդական ՀՄՀՌԴ, սուլֆասալազինը կարող է դիտարկվել պերիֆերիկ արթրիտով հիվանդների դեպքում: 1a A***

Հիմնական տարբերությունը նախորդ ցուցումների հետ այն է, որ աքսիալ ձևի դեպքում ավանդական ՀՄՀՌԴ տեղ չունեն բուժման մեջ ի տարբերություն նախորդ ցուցումների, որտեղ խոսվում էր այդ դեղորայքի անարդյունավետության մասին: Խորհուրդների մեջ "նորմալում" բառի ավելացումն ունի իր ուրույն նշանակությունը: Այսպես, չնայած, որ չկան ապացույցներ որ սուլֆասալազինը, մեթոտրեքսատը կամ լեֆլյունամիդն արդյունավետ են հիվանդության աքսիալ ձևի դեպքում հնարավոր է դրանց կիրառումը որպես բացառություն, երբ որևէ այլ բուժման հնարավորություն չկա: [80-82] Այդպիսի բացառիկ իրավիճակների ժամանակ անհրաժեշտ է որոշումը կայացնել հիվանդի հետ համատեղ, բացատրելով հնարավոր ցածր արդյունավետության մեծ հավանականությունը՝ չխախտելով ոչ "լավագույն հնարավոր բուժում" նորմը և ոչ էլ էթիկական ասպեկտները:

### **Խորհուրդ #9**

***Կենսաբանական ՀՄՀՌԴ պետք է դիտարկվի բարձր ակտիվությամբ հիվանդների մոտ՝ չնայած ավանդական բուժմանը. ներկայիս պրակտիկան TNFi կիրառումն է հիվանդության սկզբից: 1a A (TNFi) 1b A (IL-17i)***

Կենսաբանական ՀՄՀՌԴ-ի (ոչ միայն TNFi) կիրառումը պետք է դիտարկվի բարձր ակտիվություն ունեցող հիվանդների մոտ՝ չնայած ավանդական բուժմանը: Ասելով

ավանդական բուժում ի նկատի ունենք բուժում՝ ՈՍՀԴ-ով և ոչ դեղորայքային մեթոդով: Հիվանդության պերիֆերիկ ձևի դեպքում տեղային ԳԿՍ-ի ներարկումը և սուլֆասալազինը ևս ներառվում են "ավանդական բուժում" ձևակերպման մեջ: Ասելով "պետք է դիտարկվի" ավելի է ընդգծվում ռիսկերի և օգուտի կշռադասման գործընթացը՝ իհարկե ուղղորդվելով "համատեղ որոշում" սկզբունքով: *Աղյուսակը 1*-ում ամփոփ ներկայացված են կենսաբանական ՀՄՀՌ-ի սկսման պահանջները: Առաջին քայլը դա ռևմատոլոգի կողմից աքսիալ ՍԱ-ի ախտորոշումն է: Միայն ախտորոշման չափանիշները տեսականորեն լրացնելը ( օրինակ ASAS –ի կողմից մշակված աքսիա ՍԱ ախտորոշման չափանիշները) բավարար չէ, որպեսզի ախտորոշվի հիվանդությունը: Գիտակից ռևմատոլոգը պետք է ախտորոշի հիվանդությունը՝ կլինիկական, լաբորատոր և գործիքային հետազոտությունների տվյալները ամբողջական գնահատելուց հետո և պետք է բացառի այլ պոտենցիալ հնարավոր ախտորոշումները:

*Աղյուսակը 1.*

Աքսիալ սպոնդիլոարթրիտ՝ ախտորոշված ռևմատոլոգի կողմից

և

Բարձր CRP և/կամ դրական ՄՌՏ և/կամ սակրոիլեիտ՝ ըստ ռենտգեն հետազոտության

և

Ստանդարտ բուժման ձախողում

**Բոլոր հիվանդների համար**

- Առնվազն 2 ՈՍՀԴ ընդհանուր առման 4 շաբաթ

**Հիվանդներ՝ առավելագույն պերիֆերիկ ախտահարմամբ**

- ԳԿՍ մեկ տեղային ներարկում ըստ անհարաժեշտության
- Բուժման փորձ սուլֆասալազինով

և

Հիվանդության բարձր ակտիվություն՝ ASDAS  $\geq$  2.1 կամ BASDAI  $\geq$  4

և

Ռևմատոլոգի դրական կարծիք

Հաջորդ քայլը դա ախտորոշման չափանիշների լրացումն է՝ բարձր CRP, ՄՌՏ-ում ՉԱՀ-ի կամ ողնաշարի բորբոքման առկայություն, սակրոիլիտ՝ ռենտգենաբանորեն (համաձայն New York-ի մոդիֆիկացված սանդղակին, այն է՝ 2-րդ աստիճանի երկկողմանի կամ 3-րդ աստիճանի միակողմանի սակրոիլիտ):

Շատ երկրներում TNFi հաստատված են ռենտգենաբանորեն հաստատված աքսիալ ՍԱ-ի համար առանց հավելյալ սահմանափակումների ինչպես նաև առանց ռենտգենաբանական փոփոխությունների աքսիալ ՍԱ-ով հիվանդների համար միայն եթե առկա է բարձր CRP և/կամ բորբոքում ՄՌՏ-ով: Վերը նշվածը կարող է նշանակել, որ եթե աքսիալ ՍԱ-ով հիվանդն ունի սակրոիլիտ կամ այդ հիվանդն ումի բարձր CRP կամ բորբոքային փոփոխություններ ՄՌՏ-ով ապա ֆորմալ լրացնում է կենսաբանական ՀՄՀ-ի ստանալու պահանջը: Աշխատանքային խումբը որոշեց որ "բարձր CRP" համարել լավագույն կանխատեսող գործոնը բուժման պատասխանի համար, իսկ երկրորդ հերթին ընդունել "բորբոքումը ՄՌՏ-ում" երկու դեպքում էլ անկախ սակրոիլիտի առկայությունից [85]: Հարկ է նշել որ սակրոիլիտը բուժման պատասխանի պրեդիկտոր չի կարող համարվել, քանի որ հետազոտությունները ցույց է տվել որ անկախ սակրոիլիտի առկայությունից կամ բացակայությունից արդյունքները նույնն են երկու խմբի մոտ էլ [28]: Պետք է հիշել, որ ինֆլիքսիմաբի և IL-17-ի պաշարիչների կիրառման դեպքում սակրոիլիտի առկայությունը համարվում է պարտադիր պայման:

3-րդ քայլը վերաբերվում է ստանդարտ բուժման ձախողմանը: Սուլֆասալազինի արդյունավետությունը պետք է գնահատել առնվազն 3 ամիս կիրառելուց հետո, առավելագույնը 3 գր/օր դեղաչափով, եթե այն տանելի է: Սա տարբերվում է 2010թ-ի ցուցումների հետ, որտեղ քննարկվում էր նաև մեթոտրեքսատի կիրառումը, սակայն ներկայումս բավարար տվյալների բացակայության պարագայում քննարկվում է միայն սուլֆասալազինը ինչպես նախկինում [20 21]:

4-րդ քայլը վերաբերվում է հիվանդության ակտիվության գնահատմանը: Պատմականորեն որպես ակտիվ հիվանդություն համարվել է  $\geq 4$  ըստ BASDAI-ի: Սակայն ASDAS-ը համարվում է առավել լավ ինդեքս քան BASDAI-ը և որպես ակտիվ հիվանդություն գնահատվում է ASDAS-ը  $\geq 2.1$ : [86] ASDAS-ը համարվում է նաև լավ պրեդիկտոր ինչ վերաբերվում է սինդեզմոֆիտների ձևավորմանը այն դեքում երբ BASDAI-ը այդպիսի պրոգնոստիկ արժեք չունի [49]:

Բացի հիվանդության ակտիվությունից ռևմատոլոգի կարծիքը ևս շատ կարևոր է բուժման ընտրության հարցում: Վերջինս պետք է համակշռի բուժման հնարավոր օգտակարությունը և պոտենցիալ կողմնակի ազդեցությունները և ռիսկերը կենսաբանական ՀՄՀՌԴ կիրառումից առաջ: Այսպիսով միմիայն բժշկի և հիվանդի համատեղ որոշումից հետո է պետք սկսել բուժումը կենսաբանական ՀՄՀՌԴ-ով:


Խորհուրդի երկրորդ մասը վերաբերվում է “ներկա պրակտիկային”, ըստ որի նորմալ է համարվում TNFi նշանակումը հիվանդության սկզբից: Աքսիալ ՍԱ-ի բուժման համար ցուցված TNFi-են (ըստ այբբենական կարգի)՝ ադալիմումաբ, սերտոլիզումաբ պեգոլ, էթաներսեպտ, գոլիմումաբ և ինֆլիքսիմաբ: Վերջիններիս հետ կապված 2016թ-ի դրությամբ առկա է կուտակված մեծ կլինիկական փորձ, ըստ որի հայտնի է նշված դեղորայքի երկարատև օգտագործման դրական արդյունքները[22]: Առաջին անգամ հաստատվել է նաև կենսաբանական ՀՄՀՌԴ այլ խումբ բացի TNFi-ից, IL-17-ի պաշարիչները: Ներկայումս հաստատված է միայն սեկոկինումաբի կիրառումը աքսիալ ՍԱ-ի ժամանակ սակայն միայն ռենգենաբանորեն հաստատված սակրոիլեիտով հիվանդների մոտ: Ներկայիս մոտեցումն է կիրառել IL-17-ի պաշարիչները TNFi-ի անհաջողությունից հետո: Հարկ է նշել որ IL-17 պաշարիչներն արդյունավետ են մաշկային պսորիազի համար սակայն նրանց կիրառումը հակացուցված է աղիքային բորբոքային հիվանդությունների դեպքում: Հետազոտությունները ցույց են տվել պլասիբոյի համարժեք տվյալներ Կրոնի հիվանդության ժամանակ՝ իհարկե հավելյալ մեծ կողմնակի ազդեցություններով հանդերձ [90 91]: Փորձարկվել են նաև IL-6-ի պաշարիչներ սակայն դրանք գտնվել են անարդյունավետ: Բացի ինֆլիքսիմաբից բոլորը ցուցված են և ռենգենաբանական սակրոիլեիտով և ոչ ռենգենաբանական սակրոիլեիտով հիվանդների համար: Առկա են նաև “դեմ առ դեմ” հետազոտությունների տվյալներ, որոնք ցույց են տալիս որոշակի հետերոգենություն հիվանդության արտահայտման ձևից կախված: Այսպիսով մոնոկլոնալ հակամարմինները (ինֆլիքսիմաբ, ադալիմումաբ, սերտոլիզումաբ, գոլիմումաբ) արդյունավետ են աղիքային բորբոքային հիվանդությունների ժամանակ և պաշտպանում են ուլցերոսի ռեցիդիվներից (գոլիմումաբի վերաբերյալ տվյալները բացակայում են), իսկ էթաներսեպտի համար բերվում են հակասական տվյալներ ինչ վերաբերվում են ուլցերոսներին և արդյունավետ չեն աղիքային բորբոքային հիվանդությունների համար: [92-101] Էթաներսեպտը կարծես ավելի պակաս արդյունավետ է մաշկային պսորիատիկ

ախտահարումների համար՝ չնայած դեմ առ դեմ տվյալները բացակայում են: [23] Այս փաստաթղթում նույնականացվում են օրիգինալ կենսաբանական ՀՄՀՌԴ և կենսանմանակ (biosimilar) կենսաբանական ՀՄՀՌԴ: Դեղորայքն ընտրելիս նրա արժեքը ևս անհրաժեշտ է հաշվի առնել:

Հատկանշական է, որ մեր հանրապետության համար շատ կարևոր դեր է խաղում կենսաբանական ՀՄՀՌԴ-ի շատ թանկարժեք լինելու փաստը, որոնք պրակտիկորեն չեն հատուցվում ոչ մի ապահովագրական ընկերության կամ պետության կողմից, որն էլ ծայրաստիճան նվազեցնում է նրանց կիրառումը ամենօրյա պրակտիկայում:

